«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ,
Հեռ. 24 50 99; ֆաքս՝ 24 51 99

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն բաց ընթացակարգը հայտարարվում է համաձայն
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
ԿԳՄ 2017 թվականի
Հուլիսի 21-ի նիստի որոշման և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն
Բաց ընթացակարգի ծածկագիրն է՝ «3-Crpax-2017-ՄԷԿ»

Պատվիրատուն՝«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ («ՄԷԿ» ՓԲԸ), որի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, 0021 ք. Երևան, Ադոնցի 10Բ, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:
Բաց մեկ փուլից կազմված, առանց նախնական ընտրության մրցույթի ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր գնման առարկա հանդիսացող՝ աշխատակիցների կամավոր բժշկական ապահովագրության, “ՄԷԿ” ՓԲԸ 2017 թվականի կարիքների համար:
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:
Գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անձինք:

Մասնակիցները պետք է բավարարեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված որակավորման չափանիշների պահանջները; ընտրված մասնակցին որոշելու համար կկիրառվի հայտերի բացման և գնահատման մասին «Գնումների մասինե ՀՀ օրենքով և «ՄԷԿ» ՓԲԸ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին Կանոնադրությամբ սահմանված կարգը:
Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Մրցութային փաթեթը հայերեն /ռուսերեն լեզվով ստանալու համար, անհրաժեշտ է 40 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հայտարարությունը հրապարակելու պահից գրավոր դիմել Պատվիրատուին հետևյալ հասցեով՝ 0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ, մրցութային գնումների դեպարտամենտ, սենյակ 201, վճարելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ դրամարկղ կամ փոխանցելով հաշվարկային հաշվին «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ – 1570012654440100, ՀՎՀՀ-00078569-100 000 (հարյուր հազար դրամ) ՀՀԴ:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2017 թ. օգոստոսի 30-ին, ժամը 16:00, «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ / Հայաստանի Հանրապետություն, 0021, ք.Երևան, փող. Ադոնցի 10 Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝ ***e.avetisyan@mek.am;***

Հայտերը բացվում են Ընկերության ԿԳՄ նիստին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրը՝2017 թվականի օգոստոսի 31-ին ժամը 11:00-ին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:
Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Բարսեղյան , 010 24 50 99(202) հեռախոսահամարով:

Հ Ր Ա Վ Ե Ր

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑ ՄԵԿ ՓՈՒԼԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ՝ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ“ՄԷԿ” ՓԲԸ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՝ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

ք. Երեւան
2017թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ընդհանուր տեղեկություններ մրցույթի վերաբերյալ

1.1.1 Մրցույթի Կազմակերպիչ հանդիսացող՝ «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ /«ՄԷԿ» ՓԲԸ ՀՀ, 0014, ք. Երեւան, Աղոնցի փող. 10Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e'mail՝ office@mek.am/՝ մրցույթի անցկացման մասին հրապարակված Ծանուցմամբ (հրապարակվել է 2017թ. հուլիսի “21-ին” “Ռուսհիդրո” ԲԲԸ միասնական տեղեկատվական պորտալում, բաժին «Գնումներ» www.rushydro.ru, «ՄԷԿ» ՓԲԸ կորպորատիվ ինտերնետային կայքում, բաժին «Գնումներ» www.mek.am) և ՀՀ Ֆինանսների Նախարարության պաշտոնական ինտերնետ-կայքում, բաժին «Գնումներ» www.minfin.am) հրավիրում է իրավաբանական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներ) մասնակցելու առանց նախնական որակավորման ընտրության բաց միափուլ մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ)՝ “ՄԷԿ” ՓԲԸ աշխատակիցների կամավոր բժշկական ապահովագրության՝ (այսուհետ՝ Ծառայություններ) Պայմանագիր կնքելու իրավունքի նպատակով՝ Մրցույթի Կազմակերպչի կարիքների համար:

1.1.2 Տեղեկությունների համար դիմել.

մրցույթի Կազմակերպիչ՝ “ՄԷԿ” ՓԲԸ Կենտրոնական Գնումների Մարմնի պատասխանատու քարտուղար պրն. Ա. Բ. Բարսեղյանին. հեռախոս՝ 093 900 220; ֆաքս՝ 24 51 99; էլեկտրոնային հասցեն՝ a.barseghyan@mek.am;

1.1.3. Մրցույթն անց է կացվում «ՄԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 2017 թվականի հուլիսի 21-ի թիվ 157 հրամանի հիման վրա:

1.1.4. Կատարվելիք աշխատանքներին ներկայացվող պահանջները շարադրված են բաժին 2-ում (այստեղ և այսուհետ հղումները վերաբերում են սույն Մրցութային փաստաթղթերին): Պայմանագրի նախագիծը, որը կկնքվի Մրցույթի արդյունքներով, ներկայացված է բաժին 3-ում: Մրցույթի անցկացման և դրանում մասնակցության կարգը, ինչպես նաև Մրցութային հայտերի նախապատրաստման հրահանգները բերված են 4 և 5 բաժիններում:

1.2. Փաստաթղթերի իրավական կարգավիճակը

1.2.1 1.1.1. կետին համապատասխան հրատարակված (պաշտոնական է համարվում «ՄԷԿ» ՓԲԸ սայթում հրատարակված տարբերակը)՝ Մրցույթի անցկացման մասին Ծանուցումը՝ իր անբաժանելի հավելվածը հանդիսացող սույն Մրցութային փաստաթղթերի հետ միասին հանդիսանում են Մրցույթի կազմակերպչի օֆերտա և մրցույթի Մասնակիցների կողմից պետք է դիտակվի այդպիսին՝ Մրցույթի անցկացման համար սահմանված ժամկետում:

1.2.2. Մրցույթի Մասնակցի մրցութային հայտն ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և կդիտարկվի այդպիսին մրցույթի Կազմակերպիչի կողմից:

1.2.3. Մրցույթի կազմակերպչի և մրցույթի Հաղթողի կողմից ստորագրված՝ Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունն ունի պայմանագրի ուժ, որով սահմանվում է կողմերի պարտականությունը՝ կնքել Պայմանագիր մրցույթի անցկացման մասին Ծանուցմամբ, Մրցութային փաստաթղթերով և մրցույթը Հաղթողի Մրցութային հայտով սահմանված պայմաններով՝ հաշվի առնելով սույն Մրցութային փաստաթղթերի շրջանակներում սահմանված նախապայմանագրային բանակցությունների անցկացման հնարավորությունը:

1.2.4. Մրցույթի արդյունքներով կնքված Պայմանագիրն ամրագրում է կողմերի միջև ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները:

1.2.5. Մրցույթի Հաղթողի հետ կնքվող պայմանագրի պայմանները սահմանելիս օգտագործվում են հետևյալ փաստաթղթերը՝ պահպանելով նշված հիերարխիան (դրանց հակասության դեպքում)

ա) Մրցույթի կազմակերպչի և մրցույթի Հաղթողի միջև նախապայմանագրային բանակցությունների արձանագրությունները (այն պայմանների վերաբերյալ, որոնք ոչ սույն Մրցութային փաստաթղթերում, ոչ մրցույթը Հաղթողի Մրցութային հայտում չեն հիշատակվել)

բ) Մրցույթի արդյունքների մասին արձանագրություն,

գ) Մրցույթի անցկացման մասին Ծանուցում և սույն Մրցութային փաստաթղթերը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,

դ) Մրցույթը Հաղթողի մրցութային հայտը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,

1.2.6. մրցույթի կազմակերպիչի և Մրցույթի Մասնակիցների այլ փաստաթղթեր տվյալ Մրցույթի կապակցությամբ չեն սահմանում կողմերի իրավունքերն ու պարտականությունները :

1.2.7. Այն ամենում ինչը կարգավորված չէ Մրցույթի անցկացման մասին Ծանուցմամբ և սույն Մրցութային փաստաթղթերով, կողմերը ղեկավարվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով:

1.2.8. Եթե Մրցույթի արդյունքներով կնքվող Պայմանագրի կողմերի նկատմամբ գործում են նաև սահմանված կարգով հրապարակված և գրանցված բոլոր այլ հատուկ նորմատիվ իրավական ակտերը, սույն մրցութային փաստաթղթերը (և Պայմանագրի նախագիծը, որպես դրա մաս) և Հաղթողի մրցութային Հայտը կհամարվեն առաջնային՝ նշված փաստաթղթերի դիսպոզիտիվ նորմերի նկատմամբ:

1.3 Բողոքարկում

1.3.1. Մինչև պայմանագրի կնքումը տարաձայնությունները ուղարկվում են Կենտրոնական Գնման Մարմին: ԿԳՄ պատասխանատու քարտուղարը՝ տարաձայնությունների քննարկման դիմումն ստանալու դեպքում, անհապաղ այդ մասին տեղեկացնում է գնումն անցկացնող հանձնաժողովի նախագահին և Մրցույթի կազմակերպչի Տնօրենների խորհրդին: ԿԳՄ-ում տարաձայնությունների քննարկման ժամանակահատվածում կասեցվում է գնման գործընթացը՝ մինչև որոշման ընդունումը, եթե դրա համար չկան ակնհայտ իրավաբանական կամ տնտեսական բնույթի խոչընդոտներ :

1.3.2. Եթե տարաձայնությունները չեն լուծվում այն ներկայացնող մասնակցի և գնում իրականացնող անձանց փոխադարձ համաձայնությամբ, մրցույթի Կազմակերպիչ ԿԳՄ նման տարաձայնություններ ստանալու պահից 10 օրյա ժամկետում կայացնում է գրավոր որոշում, որը պետք է բովանդակի՝

ա) որոշման ընդունման շարժառիթների հիմնավորումը,

բ) շարադրված պահանջների բավարարմանն ուղղված միջոցները՝ տարաձայնությունների մասնակի կամ ամբողջական լուծման դեպքում

1.3.3. ԿԳՄ իրավասու է ընդունել հետևյալ որոշումներից մեկը կամ մի քանիսը

ա) մրցույթների վերաբերյալ տարաձայնությունների դեպքում մրցութային հանձնաժողովի՝ ոչ իրավաչափ գործողություններ կատարած, ապօրինի ընթացակարգեր կիրառած կամ ապօրինի որոշում ընդունած անդամներին պարտավորեցնել իրականացնել գործողություններ, կիրառել ընթացակարգեր կամ ընդունել որոշում՝ սույն Կանոնակարգին համապատասխան,

բ) ավարտված գնումների վերաբերյալ տարաձայնությունների դեպքում ղեկավարությանն առաջարկել ընդունել որոշում՝ ապօրինի գործողության, որոշման կամ ապօրինի ընթացակարգի կիրառման արդյունքում մասնակցի կրած վնասները փոխհատուցելու մասին: Եթե պայմանագրում ընգրկված է վերապահում՝ պայմանագրի կնքման ընթացակարգի խախտումների հայտնաբերման դեպքում պայմանագրի միակողմանի լուծման մասին, ԿԳՄ իրավասու է առաջարկել ղեկավարությանը պայմանագրի կնքումից հետո ընդունել որոշում պայմանագրի միակողմանի լուծման մասին,

գ) մասնակցի դիմումը չհիմնավորված ճանաչել

1.3.4. Մրցույթի անցկացման կապակցությամբ առաջացող բոլոր վեճերն ու տարաձայնությունները, այդ թվում՝ Մրցույթի կազմակերպչի և Մասնակիցների կողմից իրենց պարտավորությունների կատարմանը վերաբերող, որոնք չեն կարգավորվել Մրցույթի կազմակերպչի ԿԳՄ-ին բողոքարկման ճանապարհով՝ դատական կարգով՝ նրա իրավական կարգավիճակը և վեճերի լուծման կարգը սահմանող, հայցադիմում ներկայացնելու պահին գործող փաստաթղթերին համապատասխան:

1.3.5. Վերոնշյալը չի սահմանափակում կողմերի իրավունքները դիմելու դատարան՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

1.3.6. Սույն Մրցույթի անցկացման հետ կապված ցանկացած վեճի և տարաձայնության քննարկման դեպքում՝ կողմերը հաշվի են առնում, որ ենթակա է կիրարկման Հայաստանի Հանրապետության նյութական և դատավարական իրավունքը:

1.4. Այլ դրույթներ

1.4.1. Մասնակիցը ինքնուրույն է կրում Մրցութային հայտի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը, իսկ մրցույթի Կազմակերպիչն այդ ծախսերի կապակցությամբ պատասխանատու չէ և չունի պարտավորություններ՝ անկախ Մրցույթի ընթացքից և արդյունքներից, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ ուղղակի նախատեսված դեպքերի:

1.4.2. մրցույթի Կազմակերպիչն ապահովում է Մրցույթի Մասնակիցներից ստացված բոլոր, այդ թվում՝ Մրցութային հայտերում բովանդակվող տեղեկությունների, խելամիտ գաղտնիությունը: Այդ տեղեկությունների տրամադրումը մրցույթի այլ Մասնակիցներին կամ երրորդ անձանց հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ կամ սույն Մրցութային փաստաթղթերով ուղղակի նախատեսված դեպքերում:

1.4.3. մրցույթի Կազմակերպիչն իրավասու է մերժել Մրցութային հայտը, եթե նա բացահայտի, որ մրցույթի Մասնակիցը մրցույթի Կազմակերպիչն աշխատակցին ուղղակի կամ անուղղակի տվել է, համաձայնվել է տալ կամ առաջարկել է ցանկացած տեսքով պարգևատրում, այն է՝ աշխատանք, ծառայություն, որևէ արժեքավոր իր որպես խթան, ինչը կարող է ազդեցություն ունենալ մրցույթի Հաղթող ճանաչելու՝ Մրցութային հանձնաժողովի որոշման ընդունման վրա:

1.4.4.մրցույթի Կազմակերպիչն իրավասու է մերժել Մրցույթի այն Մասնակիցների Մրցութային հայտերը, որոնք կնքել են որևէ համաձայնություն՝ մրցույթի Հաղթողի ընտրության վրա ազդելու նպատակով:

1.4.5.Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցմանը համապատասխան մրցույթի Կազմակերպիչն իրավունք ունի հրաժարվել մրցույթ անցկացնելուց ոչ ուշ քան մրցույթի արդյունքների ամփոփումից 5 (հինգ) օր առաջ, չկրելով և ոչ մի պատասխանատվություն մրցույթի Մասնակիցների կամ երրորդ անձանց առջև, որոնց նման գործողությունը կարող է վնաս պատճառել: մրցույթի Կազմակերպիչն գրավոր ձևով անհապաղ ծանուցում է Մրցույթի բոլոր Մասնակիցներին մրցույթի անցկացումից հրաժարվելու մասին:

2. Ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանք

2.1 Ընդհանուր պահանջներ

2.1.1. Անհրաժեշտ թույլտվությունների և փաստաթղթերի ձևակերպմանը ներկայացվող պահանջները բերված են 4-րդ և 5-րդ բաժիններում:

2.2. Ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջներ

2.2.1. ա) Մատուցվող ծառայությունների ծավալները ներկայացված են սույն Մրցութային փաստաթղթերի Հավելված 1-ում:

բ) Մատուցվող ծառայությունների ժամկետներին ներկայացվող պահանջներ՝ նշում է մրցույթի Մասնակիցը:

3. Պայմանագրի նախագիծ

3.1. ա) Մատուցվող ծառայությունների Պայմանագրի նախագիծը ներկայացված է սույն Մրցութային փաստաթղթերի Հավելված 2-ում:

4. Մրցույթի անցկացման կարգը: Մրցույթի հայտերի նախապատրաստման հրահանգներ

4.1. Մրցույթի անցկացման ընդհանուր կարգը

4.1.1. Մրցույթն անցկացվում է հետևյալ կարգով

ա) Մրցույթի անցկացման մասին Ծանուցման հրապարակում (4.2 ենթաբաժին),

բ) Մրցութային փաստաթղթերի տրամադրում կապալառուներին (4.3 ենթաբաժին),

գ) Մրցույթի Մասնակիցների կողմից իրենց Մրցութային հայտերի նախապատրաստում, Մրցույթի կազմակերպչի կողմից Մրցութային փաստաթղթերի պարզաբանում, եթե անհրաժեշտ է (4.4 ենթաբաժին),

դ) Մրցութային հայտերի ներկայացում և դրանց ընդունում (4.6. ենթաբաժին)

ե) Մրցութային հայտերով ծրարների բացում (4.7. ենթաբաժին),

զ) Մրցութային հայտերի գնահատում (4.8. ենթաբաժին),

ը) Մրցույթի Հաղթողի որոշում (4.9. ենթաբաժին),

թ) Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրում (4.10. ենթաբաժին),

ժ) Պայմանագրի ստորագրում (4.11. ենթաբաժին),

ի) Մրցույթի արդյունքների մասին մրցույթի Մասնակիցներին ծանուցում (4.12. ենթաբաժին):

4.2. Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցման հրապարակում

4.2.1. Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցումը հրապարակվել է 1.2.1. կետում նշված կարգով:

4.2.2. Այլ հրապարակումները չեն հանդիսանում պաշտոնական և Մրցույթի կազմակերպչի համար որևէ հետևանքներ չեն առաջացնում:

4.3. Մրցութային փաստաթղթերի տրամադրում Մասնակիցներին

4.3.1. Մասնակիցները կարող են ստանալ Մրցութային փաստաթղթերը՝ գրավոր դիմելով Մրցույթի կազմակերպչին:

4.3.2. մրցույթի Կազմակերպիչն պատասխանատու է մրցույթ անցկացնելու մասին Ծանուցման և Մրցութային փաստաթղթերի պայմանների կատարման համար միայն այն Մասնակիցների առջև, ովքեր Մրցութային փաստաթղթերը ստացել են 4.3.1 կետում նշված կարգով:

4.4. Մրցութային հայտերի նախապատրաստում

4.4.1. Մրցութային հայտին ներկայացվող ընդհանուր պահանջներ

4.4.1.1. Մրցույթի մասնակիցը պետք է նախապատրաստի մրցութային հայտը, որը ներառում է.

ա) Օֆերտայի ներկայացման մասին նամակ հավելվածներով՝ սույն Մրցութային փաստաթղթերում բերված ձևերին և հրահանգներին համապատասխան (բաժին 5),

բ) փաստաթղթեր, որոնք հաստատում են մրցույթի Մասնակցի համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին (4.5 ենթաբաժին):

4.4.1.2. Մրցույթի Մասնակիցն իրավունք ունի ներկայացնել միայն մեկ Մրցութային հայտ: Այս պահանջի խախտման դեպքում մրցույթի այսպիսի Մասնակցի բոլոր Մրցութային հայտերը մերժվում են առանց ըստ էության քննվելու:

4.4.1.3. Մրցութային հայտում ներառվող յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ստորագրվի այն անձի կողմից, ով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրավունք ունի գործել մրցույթի Մասնակցի անունից առանց լիազորագրի կամ նրա կողմից պատշաճ կերպով լիազորված անձը՝ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ լիազորված անձ) հավատարմագրի հիման վրա: Վերջինիս դեպքում լիազորագրի բնօրինակը կցվում է Մրցութային հայտին:

4.4.1.4. Մրցութային հայտում ներառվող յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ամրակցվի մրցույթի Մասնակցի կնիքով:

4.4.1.5. 4.4.1.3 և 4.4.1.4 կետերի պահանջները չեն տարածվում փաստաթղթերի՝ նոտարապես վավերացված պատճենների կամ տպագրական եղանակով կազմված փաստաթղթերի վրա:

4.4.1.6. Եթե ներկայացվում են տեղեկատվության լրացուցիչ կրիչները (սկավառակներ, CD-R, CD-RW, գրքույկներ, գրքեր), ապա դրանք, եթե դա հնարավոր է, պետք է լինեն համապատասխան ձևով նշագրված (օրինակ պիտակների օգնությամբ):

4.4.1.7. Դրանից հետո պետք է կատարվի Մրցութային հայտի անխտիր բոլոր էջերի համարակալում:

4.4.1.8. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերը պետք է ամրակցվեն կամ փաթեթավորվեն այնպես, որ բացառվի տեղեկատվական ծրարների և էջերի պատահաբար թափվելը կամ խառնվելը: Եթե Մրցութային հայտը բաղկացած է մի քանի հատորից, խորհուրդ է տրվում, յուրաքանչյուր հատոր կարել՝ կցելով դրանում ներառված փաստաթղթերի ցանկը: Յուրաքանչյուր այսպիսի հատոր պետք է ունենա էջերի միջանկյալ համարակալում:

4.4.1.9. Մրցույթի Մասնակիցը պետք է նախապատրաստի և Մրցույթի կազմակերպչին տրամադրի Մրցութային հայտի 1 բնօրինակ և 1 պատճեն թղթե կրիչով, ինչպես նաև հայտի 1 էլեկտրոնային կրկնօրինակ (ցանկալի է): Մրցութային հայտի պատճենները նախապատրաստվում են Մրցութային հայտում ներառված յուրաքանչյուր փաստաթղթի բնօրինակի պատճենահանման եղանակով՝ դրանց ստորագրումից և կնիքով վավերացումից, ինչպես նաև էջերի միջանկյալ համարակալումից հետո,, բայց կարելուց առաջ:

4.4.1.10. Մրցութային հայտի տեքստում և ոչ մի ուղղում ուժ չունի, բացառությամբ այն դեպքերի, երբ այս ուղղումները հաստատված «ուղղմանը հավատալ» ձեռագիր մակագրությամբ և լիազորված անձի ձեռագիր ստորագրությամբ՝ տեղակայված յուրաքանչյուր ուղղման կողքին:

4.4.2. Մրցութային հայտի գործողության ժամկետին ներկայացվող պահանջներ վերաբերյալ

4.4.2.1. Մրցութային հայտը վավեր է այն ժամկետի սահմաններում, որը նշված է օֆերտայի ներկայացման մասին՝ մրցույթի Մասնակցի նամակում (5.1. ենթաբաժին): Ամեն դեպքում, այդ ժամկետը չպետք է պակաս լինի 30 օրացուցային օրից, հաշված՝ մրցույթին ներկայացված Մրցութային հայտերի ծրարների բացման ընթացակարգի անցկացման օրվան հաջորդող օրվանից (4.7.1. կետ):

4.4.2.2. Գործողության առավել կարճ ժամկետի նշումը կարող է Մրցութային հայտի մերժման հիմք հանդիսանալ:

4.4.3. Մրցութային հայտի լեզվին ներկայացվող պահանջներ

4.4.3.1. Մրցութային հայտում ներառվող բոլոր փաստաթղթերը պետք է նախապատրաստվեն հայերեն/ռուսերեն լեզվով:

4.4.3.2. Փաստաթղթերը, որոնց բնօրինակները մրցույթի Մասնակցին տրվել են երրորդ անձանց կողմից այլ լեզվով կարող են ներկայացվել բնօրինակի լեզվով, պայմանով, որ դրանց կցված են այդ փաստաթղթերի հայերեն/ռուսերեն թարգմանությունները, (հատուկ վերապահված դեպքերում՝ ապոստիլացված): Փաստաթղթի հայերեն թարգմանության և այլ լեզվով փաստաթղթի բնօրինակի միջև անհամապատասխանության բացահայտման դեպքում մրցույթի Կազմակերպիչն որոշումն ընդունելու է թանգմանության հիման վրա:

4.4.4. Մրցութային հայտի արժույթին ներկայացվող պահանջներ

4.4.4.1. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերի դրամական միջոցների բոլոր գումարները պետք է արտահայտվեն հայկական դրամով:

4.4.4.2. Փաստաթղթերը, որոնց բնօրինակները՝ դրամական միջոցների գումարներն այլ արժույթով արտահայտված, տրվել են մրցույթի Մասնակցին երրորդ անձանց կողմից, կարող են ներկայացվել բնօրինակի արժույթով պայմանով, որ այդ փաստաթղթերին կցված կլինեն մեկնաբանություններ՝ տեղի գումարները ՀՀ դրամին փոխակերպմամբ, ելնելով արժույթի՝ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած պաշտոնական փոխարժեքից՝ նշելով այդպիսի փախարժեքը և դրա սահմանման ամսաթիվը:

4.4.5. Սահմանային գին չի սահմանվում:

4.4.6. Մրցութային փաստաթղթերի պարզաբանում

4.4.6.1. Մրցույթի Մասնակիցներն իրավասու են դիմելու Մրցույթի կազմակերպչին սույն Մրցութային փաստաթղթի պարզաբանման համար: Մրցութային փաստաթղթի պարզաբանման պահանջները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով՝ կազմակերպության ղեկավարի կամ մրցույթի Մասնակցի այլ պատասխանատու անձի ստորագրությամբ:

4.4.6.2. Մրցույթի կազմակերպիչն պարտավորվում է խելամիտ ժամկետում պատասխանել ցանկացած հարցի, որը նա կստանա Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալուց ոչ պակաս, քան 10 օր առաջ (4.6.5. կետ): Ընդ որում, պատասխանի պատճենը (առանց հարցի աղբյուրի մատնանշման) կուղարկվի մրցույթի՝ սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած բոլոր Մասնակիցներին (4.3 ենթաբաժին):

4.4.7. մրցութային փաստաթղթերում ուղղումներ մտցնելը

4.4.7.1. մրցույթի Կազմակերպիչն մինչև Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալը (4.6.5. ենթաբաժին) ցանկացած պահի իրավասու է ուղղումներ մտցնել սույն Մրցութային փաստաթղթի մեջ:

4.4.7.2. Սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած մրցույթի բոլոր Մասնակիցները (4.3 ենթաբաժին) անհապաղ ծանուցվում են այսպիսի ուղղումների էության մասին օպերատիվ կապի միջոցների օգտագործմամբ (ֆաքս, էլեկտրոնային փոստ):

4.4.7.3.Անհրաժեշտության դեպքում մրցույթի Կազմակերպիչը կարող է երկարաձգել Մրցութային հայտերի ընդունման ժամկետը (4.4.8. կետ):

4.4.8. Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի երկարաձգումը

4.4.8.1.Անհրաժեշտության դեպքում մրցույթի կազմակերպիչը իրավունք ունի երկարաձգել՝ Մրցութային հայտերի ընդունման՝ 4.6.5. ենթաբաժնում սահմանված վերջնաժամկետը:

4.4.8.2. Սույն մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած՝ մրցույթի բոլոր Մասնակիցները (4.3. ենթաբաժին), անհապաղ գրավոր ծանուցվում են այդ մասին կապի միջոցների օգտագործմամբ (ֆաքս, էլեկտրոնային փոստ):

4.4.8.3. մրցույթի Կազմակերպիչը նաև իրավասու է խնդրելու մրցույթի Մասնակիցներին՝ երկարաձգել Մրցութային հայտերի գործողության ժամկետը: Մրցույթի Մասնակիցն իրավասու է համաձայնվել այդպիսի խնդրանքի հետ կամ մերժել այն: Մրցութային հայտերի գործողության ժամկետը երկարաձգելու մասին՝ Մրցույթի կազմակերպչի խնդրանքի մերժումը չունի և ոչ մի բացասական հետևանք և մրցույթի այսպիսի Մասնակցի Մրցութային հայտը գործում է սկզբնապես սահմանված ժամկետի ընթացքում:

4.5. Մրցույթի Մասնակիցներին ներկայացվող պահանջներ: Ներկայացվող պահանջներին համապատասխանության հաստատում:

4.5.1. Ընկերության կողմից ԿԳԳ-ի մասնակիցներին և ապահովագրողներին ներկայացվող հիմնական պահանջներն են.

a) ապահովագրողը պետք է ունենա ապահովագրական շուկայում առնվազն 5 (հինգ) տարվա աշխատանքային փորձ;

b) ապահովագրողը վերջին 3 (երեք) տարվա ընթացքում չպետք է ունենա պարտավորությունների կատարման ժամկետանցման փաստեր, պարտավորությունների ոչ պատշաճ կատարման (չկատարման) այլ փաստեր և (կամ) ապահովագրության պայմանագրերով և (կամ) վերաապահովագրության (ռետրոցեսիայի) պայմանագրերով պարտավորությունների կատարման վերաբերյալ վեճեր, որոնք կապված են Ընկերության գույքային շահերի ապահովագրության և (կամ) երրորդ անձանց նկատմամբ Ընկերության պատասխանատվության ապահո-վագրության հետ;

c) ապահովագրողը վերջին 3 (երեք) տարվա ընթացքում չպետք է ունենա պարտավորությունների կատարման ժամկետանցման փաստեր, պարտավորությունների ոչ պատշաճ կատարման (չկատարման) այլ փաստեր և (կամ) Ընկերության կողմից կնքված ապահովագրության պայմանագրերով պարտավորությունների կատարման վերաբերյալ վեճեր;

d) ապահովագրողի վճարված կանոնադրական կապիտալի չափը պետք է կազմի առնվազն 3 500 000 000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ;

e) ապահովագրողի սեփական կապիտալի չափը պետք է կազմի առնվազն 10 000 000 000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ;

f) ապահովագրողը չպետք է գտնվի լուծարման գործընթացում, նրա գույքը չպետք է կալանքի տակ գտնվի;

g) ապահովագրողը պետք է ունենա էլեկտրաէներգետիկայի բնագավառի ձեռնարկությունների ռիսկերի ապահովագրությանը և (կամ) վերաապահովագրությանը մասնակցելու առնվազն 3 (երեք) տարվա փորձ:

h) ապահովագրողը պետք է ունենա ,Շինմոնտաժային ռիսկերի ապահովագրությանը մասնակցելու առնվազն 5 (հինգ) տարվա փորձ: Ընդ որում՝ հաշվի է առնվում նաև ներկայացված վնասների դիմաց կատարված վճարումների չափը:

i) Ընկերությունը իրավունք ունի ներկայացնելու լրացուցիչ պահանջներ ինչպես ԿԳԳ-ի մասնակիցներին, այդպես էլ ապահովագրողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Ընկերության ներքին նորմատիվ փաստաթղթերի (ակտերի) պահանջներին, Ընկերության ընթացիկ ռիսկային իրավիճակին, ինչպես նաև Ընկերության համար էական այլ գործոններին համապատասխան:

4.5.2. Սահմանված պահանջներին մրցույթի Մասնակցի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերին ներկայացվող պահանջները

4.5.2.1. Վերոշարադրյալի հետ կապված՝ մրցույթի Մասնակիցը պետք է Մրցութային հայտի կազմում ընդգրկի վերոնշյալ պահանջներին նրա համապատասխանությունը հաստատող հետևյալ փաստաթղթերը.

a) գործող խմբագրությամբ կանոնադրության Մասնակցի կողմից վավերացված կրկնօրինակը;

b) Պայմանագրի կատարման հետ կապված գործունեության տեսակների գործող արտոնագրերի Մասնակցի կողմից վավերացված կրկնօրինակները;

c) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն;

d) Մասնակցի կողմից վավերացված հարկային մարմինների տեղեկանք՝ հարկերի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ կատարելու մասին;

e) Մասնակցի կողմից վավերացված դատական մարմինների տեղեկանք՝ լուծարման գործընթացքում կամ սնանկ չլինելու մասին,

f) այլ փաստաթղթեր, որոնք մրցույթի Մասնակցի կարծիքով հաստատում են իր համապատասխանությունը սահմանված պահանջներին՝ այդ փաստաթղթերի տրամադրման նպատակը պարզաբանող համապատասխան մեկնաբանություններով:

4.5.2.3. Բոլոր վերընշված փաստաթղթերը կցվում են Մրցութային հայտին՝ մրցույթի Մասնակցի կողմից:

4.5.2.4. Այն դեպքում, եթե որևիցե պատճառով մրցույթի Մասնակիցը չի կարող ներկայացնել պահանջվող փաստաթուղթը, նա պետք է կցի պահանջվող փաստաթղթի բացակայության պատճառը բացատրող, ինչպես նաև սույն պահանջին Մասնակցի համապատասխանության մասին Մրցույթի կազմակերպիչն հավաստիացում բովանդակող, կամայական ձևով կազմված տեղեկանք:

4.6. Մրցութային հայտերի ներկայացումն ու դրանց ընդունումը

4.6.1. Ներկայացնելուց առաջ Մրցութային հայտը և դրա պատճենները պետք է ապահով ձևով կնքվեն ծրարներում (փաթեթներում, արկղերում և այլն): Մրցութային հայտը կնքվում է «Մրցութային հայտ» նշված բառերով ծրարում: Մրցութային հայտերը կնքվում են «Բնօրինակ» և «Կրկնօրինակ» նշված բառերով ծրարներում:

4.6.2. Այս ծրարներից յուրաքանչյուրի վրա անհրաժեշտ է նշել հետևյալ տեղեկությունները.

ա) Մրցույթի կազմակերպչի անվանումը և հասցեն 1.1.1. կետին համապատասխան,

բ) մրցույթի Մասնակցի ամբողջական ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն,

գ) պայմանագրի առարկան՝ 1.1.1. կետին համապատասխան:

4.6.3. Մրցութային հայտով և դրա պատճեններով՝ կնքված ծրարները տեղավորվում են մեկ արտաքին ծրարի մեջ, որը նույնպես պետք է ապահով կերպով կնքվի: Արտաքին ծրարի վրա նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

ա) Մրցույթի կազմակերպիչուի անունը և հասցեն՝ 1.1.1. կետին համապատասխան,

բ) Պայմանագրի առարկան՝ 1.1.1. կետին համապատասխան,

գ) «Չբացել մինչև 31.08.2017 թվականի, ժամը 11:00: Բացել միայն ԿԳՄ-ի նիստին» բառերը:

դ) մրցույթի Մասնակցի ամբողջական ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն:

4.6.4. Մրցույթի մասնակիցները պետք է ապահովեն իրենց մրցութային հայտերի առաքումը Մրցույթի կազմակերպչի՝ կոնտակտային անձ (1.1.2. կետ):

4.6.5. Մրցութային հայտերի վերջնաժամկետն է՝ 2017 թվականի օգոստոսի 30-ին ժամը 16:00: Վերոնշյալ ժամանակից ուշ ստացված մրցութային հայտերը, կմերժվեն Մրցույթի կազմակերպիչուի կողմից առանց ըստ էության քննվելու՝ անկախ ուշացման պատճառներից:

4.6.6. Մրցույթի կազմակերպիչն ծրարն առաքող անձին տալիս է ստացական այն մասին, որ ինքը ստացել է ծրարը՝ նշելով այն ստանալու ժամանակը:

4.7. Մրցույթին ներկայացված ծրարների բացումը

4.7.1. մրցույթի Կազմակերպիչը անց է կացնում ընդունված ծրարների բացման հրապարակային ընթացակարգը Ծանուցման մեջ նշված նասցեով և ամսաթվին:

4.7.2. Այս ընթացակարգին կարող են ներկա գտնվել մրցույթի Մասնակիցների ներկայացուցիչները, ովքեր ժամանակին ներկայացրել են իրենց մրցութային հայտերը: Ծրարների բացման ընթացակարգին ներկա գտնվելու իրավունքը հավաստելու համար Մասնակիցների ներկայացուցիչները պետք է ունենան Մրցույթի կազմակերպչի՝ ծրարները ստանալու մասին ստացականների բնօրինակները :

4.7.3. Մրցույթի Մասնակիցների ներկա գտնվող ներկայացուցիչները գրանցվում են, իսկ գրանցման թերթը կցվում է ծրարների բացման արձանագրությանը:

4.7.4. Սույն ընթացակարգի ժամանակ Մրցութային հանձնաժողովը բացում է ստացված յուրաքանչյուր ծրար և հրապարակում է հետևյալ տեղեկությունները՝ հիմնվելով Մրցութային հայտի նյութերի վրա.

ա) մրցույթի Մասնակցի անվանումը և հասցեն,

բ) կատարվող աշխատանքների անվանումը և Մրցութային հայտի ընդհանուր գինը,

գ) այլ տեղեկություններ, որոնք Մրցութային հանձնաժողովը անհրաժեշտ է համարում հրապարակել:

4.7.5. Բացման ընթացակարգի ժամանակ Մրցութային հանձնաժողովը վարում է համապատասխան արձանագրություն, որտեղ արտացոլված է Մրցութային հանձնաժողովի հրապարակած ողջ տեղեկատվությունը:

4.8. Մրցութային հայտերի գնահատումը

4.8.1. Ընդհանուր դրույթներ

4.8.1.1. Մրցութային հայտերի գնահատումն իրականացնում է ԿԳՄ-ը և ԿԳՄ-ի կողմից (անհրաժեշտության դեպքում) ներգրավված անձինք (փորձագետներ ու մասնագետներ):

4.8.1.2. Մրցութային հայտերի գնահատումը ներառում է ընտրական փուլը (4.8.2. կետ) և գնահատման փուլը (4.8.3. կետ):

4.8.2. Ընտրական փուլ

4.8.2.1. Ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը ստուգում է.

ա) մրցութային հայտերի ձևակերպման ճշգրտությունը և դրանց համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերին ըստ էության,

բ) մրցույթի մասնակիցների համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին,

գ) ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթի պահանջներին:

4.8.2.2. Ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը կարող է մրցույթի Մասնակիցներից պահանջել իրենց մրցութային հայտերի պարզաբանումները և լրացումները, այդ թվում՝ բացակայող փաստաթղթերի տրամադրում: Ընդ որում, Մրցութային հանձնաժողովն իրավասու չէ բացատրություն պահանջել կամ պահանջել պարզաբանումներ կամ փաստաթղթեր, որոնք փոխում են Մրցութային հայտի էությունը:

4.8.2.3. Մրցութային հայտերի ձևակերպման ճշգրտությունը ստուգելիս Մրցութային հանձնաժողովն իրավասու է ուշադրություն չդարձնել մանր թերություններին և վրիպակներին, որոնք չեն ազդում Մրցութային հայտի էության վրա: Մրցութային հանձնաժողովը կարող է ուղղել ակնհայտ թվաբանական և քերականական սխալները:

4.8.2.4. Ընտրական փուլի անցկացման արդյունքներով Մրցութային հանձնաժողովը մերժում է այն մրցութային հայտերը, որոնք.

ա) էապես չեն համապատասխանում սույն Մրցութային փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջներին,

բ) տրված են մրցույթի Մասնակիցների կողմից, ովքեր չեն համապատասխանում սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին,

գ) տրված են մրցույթաի Մասնակիցների կողմից, ովքեր չեն տրամադրել սույն փաստաթղթերով պահանջվող փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են Մասնակցի կամ նրա կողմից առաջարկվող արտադրանքի մասին ոչ հավաստի տեղեկություններ,

դ) ներառում են սույն Մրցութային փաստաթղթերով սահմանված պայմաններին չհամապատասխանող առաջարկներ,

ե) տրված են մրցույթի Մասնակիցների կողմից, ովքեր չեն համաձայնվել Մրցութային հանձնաժողովի առաջարկի հետ՝ ուղղելու իրենց մրցութային հայտերի ակնհայտ թվաբանական կամ քերականական սխալները:

4.8.3. Գնահատման փուլ

4.8.3.1. Գնահատման փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը համադրում և գնահատում է Մրցութային հայտերը՝ ըստ Մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման չափանիշների՝ ելնելով հետևյալ չափանիշներից.

ա) աշխատանքների արժեքը և դրանց վճարման պայմանները,

բ) Մասնակցի որակավորումը (նմանատիպ պայմանագրերի քանակ),

գ) Մասնակցի հուսալիությունը (փորձ, ռեսուրսային հնարավորություններ և այլն):

4.9. Մրցույթի հաղթողին որոշելը

4.9.1. Նիստի ժամանակ Մրցութային հանձնաժողովը որոշում է մրցույթի Հաղթողին, որպես Մրցույթի մասնակցի, որի Մրցույթային հայտը գրավել է առաջին տեղը ըստ Մրցութային հայտերի՝ Մրցույթի կազմակերպչի համար նախընտրելիության աստիճանի՝ ըստ հաստատված գնահատման չափանիշների:

4.9.2. ԿԳՄ՝ մրցույթի Հաղթողի մասին որոշումը ձևակերպվում է ԿԳՄ նիստի արձանագրությամբ:

4.9.3. Մրցույթի Մասնակիցը անհապաղ տեղեկացվում է մրցույթի Հաղթող ճանաչվելու մասին, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին արձանագրության ստորագրման տեղի և կարգի մասին: (ենթաբաժին 4.10):

4.10. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրում:

4.10.1. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրումը նշանակվում է (կանխավ) մրցույթի արդյունքների ամփոփման ամսաթվից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ Մրցույթի կազմակերպչի հասցեով: Հատուկ դեպքերում մրցութային հանձնաժողովը կատող է երկարացնել տվյալ ժամկետը:

4.10.2. Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրվում է երկու օրինակով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

4.10.3. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը յուրաքանչյուր կողմի հետ ստորագրվում է այն անձի կողմից, որը իրավունք ունի գործել մրցույթի Մասնակցի անունից առանց լիազորագրի՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կամ պատշաճ կերպով լիազորված անձի կողմից՝ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ լիազորված անձի), ինչպես նաև ամրակցվում է կողմերի կնիքներով: Ընդ որում յուրաքանչյուր կողմ իրավասու է պահանջել մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրած անձի իրավասության հաստատումը:

4.10.4. Մրցույթի կազմակերպիչն իրավունք ունի միակողմանի լուծել մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը, եթե մրցույթի Հաղթողը՝

ա) չի ստորագրի Պայմանագիրը՝ մրցույթի արդյունքների մասին Արձանագրությամբ սահմանված ժամկետում,

բ) կհրաժարվի Պայմանագրի ստորագրումից՝ 1.2.5 կետերում սահմանված պայմաններով,

գ) չի կատարի սույն Մրցութային փաստաթղթերով նախատեսված այլ պայմաններ:

4.11. Պայմանագրի ստորագրում

4.11.1. Պայմանագիրը Մրցույթի կազմակերպչի և մրցույթի Հաղթողի միջև սորագրվում է մրցույթի արդյունքների մասին Արձանագրության հիման վրա (ենթաբաժին 4.10) 5 (հինգ) օրվա ընթացքում:

4.11.2. Այն դեպքում, եթե ՀՀ գործող օրենսդրությամբ և Մրցույթի կազմակերպիչը հիմնադիր փաստաթղթերով Մրցույթի կազմակերպչի կառավարման կոմպետենտ մարմինների կողմից (Բաժնետերերի ընդհանուր ժողովի, Տնօրենների խորհրդի և այլն), պահանջվում է Հաղթողի առաջարկած պայմանագրի պայմանների համապատասխան նախնական համաձայնեցում (հավանություն, հաստատում), Հաղթողի հետ պայմանագիրը կնքվում է միայն այդպիսի համաձանեցումից (հավանություն, հաստատում) հետո, իսկ 4.11.1 կետում նշված ժամկետը հաշվվում է այդպիսի համաձայնություն (հավանություն, հաստատում) ստանալուց հետո:

4.11.3. Բոլոր այն հարցերի շուրջ, որոնք չեն արտացոլվել մրցույթի անցկացման մասին Ծանուցման, սույն Մրցութային փաստաթղթերի և մրցույթի Հաղթողի Մրցութային հայտի մեջ, կողմերը իրավունք ունեն բանակցություններ վարել: Բանակցությունների ընթացքը և ձեռք բերված արդյունքները ամրագրվում են մինչպայմանագրային բանակցությունների Արձանագրությունում:

4.11.4. Պայմանագրի պայմանները որոշվում են 1.2.5. կետին համապատասխան:

4.12. Մրցույթի Մասնակիցների տեղեկացումը մրցույթի արդյունքների մասին

4.12.1. Մրցույթի արդյունքների մասին արձանագրության ստորագրումից հետո Մրցույթի կազմակերպիչն մրցույթի բոլոր Մասնակիցներին իրենց գրավոր հարցումին ծանուցում կուղարկի մրցույթի արդյունքների մասին:

4.12.2. Մրցույթի կազմակերպիչն կհրապարակի մրցույթի արդյունքների մասին տեղեկությունները կամ այն մասին, որ մրցույթը տեղի չի ունեցել «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ www.mck.am կորպորատիվ ինտերնետային սայթում, բաժին «Գնումներ»:

4.12.3. Եթե արձանագրության ստորագրումից մինչև պայմանագրի ստորագրումը հաղթողը փոխվում է (օրինակ՝ հրաժարման արդյունքում) Մասնակիցները նույն կարգով են տեղեկացվում նոր հաղթողի մասին:

4.13 Մրցույթի Մասնակցի կողմից պարատավորությունների կատարման ապահովումը բանկային երաշխիքի միջոցով

4.13.1 Մրցույթի Մասնակիցը իր Մրցութային հայտի կազմում ներկայացնում է մրցույթի մասնակցության և Մրցութային հայտի ներկայացման հետ կապված պարտավորությունների կատարման ապահովումը՝ Մրցութային հայտի առաջարկվող ընդհանուր գումարի 2 %-ի չափով:

4.13.2 Մրցույթի Մասնակցի պարտավորությունների կատարման ապահովումը պետք է ունենա բանկային երաշխիքի ձև, որը կազմված է հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 383-394 հոդվածների պահանջները և հետևյալ պայմանները.

4.13.2.1 Բանկային երաշխիքը պետք է լինի անետկանչելի:

4.13.2.2 Բանկային երաշխիքի գումարը պետք է արտահայտված լինի ՀՀ դրամով:

4.13.2.3 Բանկային երաշխիքը պետք է գործի մրցութային հայտի գործողության ժամկետի ընթացքում:

4.13.2.4 Որպես բենեֆիցիար բանկային երաշխիքում պետք է նշված լինի մրցույթի կազմակերպչի, իսկ պրինցիպալ՝ մրցույթի Մասնակիցը, երաշխավոր՝ բանկը, որը տվել է բանկային երաշխիք:

4.13.2.5 Բանկային երաշխիքում պետք է նախատեսված լինի մրցույթի կազմակերպիչուի բացարձակ իրավունքը պահանջել և ստանալ բանկային երաշխիքի գումարը հետևյալ դեպքերում.

a) Մրցութային հայտի գործողության ժամկետի ընթացքում դրա փոփոխության կամ հետ կանչելու;

b) ներկայացված Մրցութային հայտում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներկայացնելու կամ տեղեկատվությունը կամ փաստաթղթերը դիտավորյալ աղավաղելու;

c) մրցույթի Մասնակցի՝ մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու;

d) մրցույթի Հաղթողի՝ Պայմանագիր կնքելուց հրաժարվելու:

4.13.3 Բանկային երաշխիքում պետք է նախատեսված լինի, որ ապահովման գումարը պահանջելու և ստանալու համար մրցույթի կազմակերպչին երաշխավորողին ուղղարկում է միայն գրավոր պահանջ և բանկային երաշխիքի բնօրինակը:

4.13.4 Բանկային երաշխիքով վճարումը պետք է իրականացվի բենեֆիցիարի դիմելու պահից 5 բանկային օրվա ընթացում:

4.13.5 Բանկային երաշխիքում չպետք է լինեն պայմաններ կամ պահանջներ, որոնք հակասում են վերոգրյալին կամ վերը շարադրվածը դարձնում են կատարման համար անհնար:

4.13.6 Ներկայացված բանկային երաշխիքի հուսալիությունը և թույլատրելիությունը կորոշվի մրցույթի կազմակերպչի մեթոդոլոգիայի միջոցով:

4.13.7 Մրցութային հայտի պատճենների կազմում պետք է ներառվեն բանկային երաշխիքների պատճենները:

4.13.8 Բանկային երաշխիքը պետք է տրամադրվի տրամադրվի բանկի, ապահովագրական ընկերության կամ այլ վարկային կազմակերպության կողմից, որոնց մասին ստույգ հայտնի է, որ նրանք չեն հանդիսանում անվճարունակ, սնանկ, չեն գտնվում արտաքին կառավարման ներքո կամ նրանց լիցենզիաները կասեցված չեն ամբողջությամբ կամ մասնակի:

4.13.9 Մրցույթի հաղթողին բանկային երաշխիքը վերադարձնում են Պայմանագիր կնքելու պահին: Մրցույթի մնացած Մասնակիցներին բանկային երաշխիքը վերադարձվում է (նրանց հարցմամբ) Պայմանագիր կնքելուց կամ մրցույթը չկայացած հայտարարելուց կամ հայտի գործողության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (կախված, թե որը ավելի շուտ վրա կհասնի):

4.13.10 Բանկային երաշխիքը կարող է ներկայացվել երաշխիք տրամադրած բանկին՝ պարտավորության ապահովության գումարը վճարելու համար, մրցույթի կազմակերպչի որոշման հիման վրա՝ մրցույթի Մասնակցի կողմից իր պարտավորությունների խախտման դեպքում (ենթակետ 4.13.2.5):

4.13.11 Մրցույթի Մասնակիցների կողմից պարտավորությունների ապահովման չներկայացումը հիմք է հանդիսանում Մրցութային հայտի մերժման համար:

5. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերի հիմնական ձևերի նմուշները

5.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակ (ձև 1)

5.1.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակի ձևը

ձևի սկիզբ

«----» ----------թվականի
№----------

Հարգելի պարոնայք

Ուսումնասիրելով մրցույթի անցկացման Ծանուցումը՝ հրատարակված[նշվում է մրցույթի անցկացման մասին Ծանուցագրի հրապարակման ամսաթիվը և հրատարակությունը, որում այն հրատարակվել է], և Մրցութային փաստաթղթերը, և ընդունելով դրանցում սահմանված մրցույթի պայմանները և պահանջները,

(Մասնակցի ամբողջական անվանումը՝ նշելով կազմակերպաիրավական ձևը)

գրանցված հետևյալ հասցեով
_____
(մրցույթի Մասնակցի իրավաբանական հասցեն)
առաջարկում է հետևյալ աշխատանքների կատարման Պայմանագիր կնքել՝
_____
(Պայմանագրի առարկայի կրճատ նկարագրություն)
ընդհանուր գումարով

Մրցութային հայտի վերջնական արժեքը, առանց ԱԱՀ, դրամ

_____
(վերջնական արժեքը, դրամ, առանց ԱԱՀ)

բացի դրանից ԱԱՀ, դրամ

ընդամենը ԱԱՀ-ով, դրամ

_____
(ընդհանուր արժեքը, դրամ, ԱԱՀ-ով)

Սույն Մրցութային հայտը ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և գործում է մինչև “ ___ “ թվականը (ոչ պակաս քան 30 օր սկսած Մրցութային հայտերի ծրարների բացման օրվանից):

Սույն Մրցութային հայտը լրացվում է հետևյալ փաստաթղթերով՝ ներառյալ անբաժանելի հավելվածները՝

Կոմերցիոն առաջարկ (համաձայն մրցութային փաթեթի թիվ 2 հավելվածի) թ.

Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրությունը (ձև 2) - ____թ.

Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկը (ձև 3) - ____թ.

Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք (ձև 4) - ____թ.

Մրցույթի Մասնակցի համապատասխանությունը սահմանված պահանջներին հաստատող փաստաթղթեր (բաժին 4.5.) - _թ.

_____
(Կ.Տ. ստորագրություն)

_____
(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

5.1.2. Լրացման հրահանգներ

5.1.2.1. Նամակը հարկավոր է ձևակերպել մրցույթի Մասնակցի պաշտոնական բլանկի վրա: Մրցույթի Մասնակիցը տալիս է համար և ամսաթիվ՝ իր մոտ ընդունված փաստաթղթաշրջանարության կանոններին համապատասխան:
5.1.2.2. Մրցույթի Մասնակիցը պետք է նշի իր լրիվ անվանումը (կազմակերպչահրավական ձևի նշումով) և իրավաբանական հասցեն:

5.1.2.3. Մրցույթի Մասնակիցը պետք է աշխանքների կատարման արժեքը նշի թվերով և բառերով, դրամով առանց ԱԱՀ, ԱԱՀ-ի մեծությունը և ԱԱՀ-ի հետ միասին՝ աշխատանքների գնի Կոմերցիոն առաջարկին համապատասխան (սյունակ «ԸՆԴՀԱՆՈՒՐ»): Գինը հարկավոր է նշել XXX XXX XXX,XX դրամ ձևաչափով, օրինակ՝ «1 234 567,89 դրամ (Մեկ միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր վաթսունյոթ դրամ ութսունինը լումա)»:
5.1.2.4. Մրցույթի Մասնակիցը պարտավոր է նշել մրցույթին մասնակցելու Հայտի գործողության ժամկետը՝ 4.4.2.1 ենթակետին համաձայն:

5.1.2.5. Մրցույթի մասնակիցը պետք է թվարկի և նշի օֆերտայի ներկայացման մասին նամակին կցվող՝ մրցույթի Մասնակցի տեխնիկաառևտրային առաջարկի էությունը որոշող փաստաթղթերից յուրաքանչյուրի ծավալը:
5.1.2.6. Նամակը պետք է ստորագրվի և ամրակցի կնիքով 4.4.1.3 և 4.4.1.4 ենթակետերի պահանջներին համապատասխան:

5.2. Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրություն (ձև 2)

5.2.1. Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրության ձև

ձևի սկիզբ

«----» ----------թվականի
թիվ ----------

Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրություն

Մրցույթի մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

Պայմանագրի «Պարտադիր» պայմանները

№ п/п	Պայմանագրի նախագծի կետի № (բաժին 3) № пункта проекта Договора (раздел 3)	Ելակետային ձևակերպումներ Исходные формулировки	Մրցույթի Մասնակցի առաջարկները Предложения Участника конкурса	Ծանոթագրություններ, հիմնավորումներ Примечания, обоснование
1.				
2.				
3.				

Պայմանագրի «Ցանկալի» պայմաններ ,Желательныеѣ условия Договора

№ п/п	Պայմանագրի նախագծի № կետը (բաժին 3) № пункта проекта Договора (раздел 3)	Ելակետային ձևակերպումներ Исходные формулировки	Մրցույթի Մասնակցի առաջարկները Предложения Участника конкурса	Ծանոթագրություններ,, հիմնավորումներ Примечания, обоснование
1.				
2.				
3.				

_____
(Կ.Տ. ստորագրություն)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

5.2.2. Պայմանագրի նախագծի տարածայնությունների Արձանագրության լրացման հրահանգներ

5.2.2.1. Մրցույթի Մասնակիցը բերում է օֆերտայի ներկայացման մասին նամակի համարը և ամսաթիվը:

5.2.2.2. Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպաիրավական ձևը) և հասցեն:

5.2.2.3. Եթե մրցույթի Մասնակիցը իր Մրցութային հայտի հետ միասին չի ներկայացնում տվյալ ձևը, դա նշանակում է, որ իր կողմից լիովին ընդունվում է ներկայացված Պայմանագրի նախագիծը (բաժին 3):

5.2.2.4. Այն դեպքում, եթե մրցույթի Մասնակիցը ունի Պայմանագրի նախագծում փոփոխություններ մտցնելու առաջարկներ, մրցույթի Մասնակիցը պետք է իր մրցութային հայտի կազմի մեջ ներկայացնի տարածայնությունների տվյալ արձանագրությունը: Տարածայնությունների պատրաստված արձանագրությունում մրցույթի Մասնակիցը պետք է հստակ տարանջատի Պայմանագրի՝ իր համար պարտադիր և ցանկալի պայմանները: Այստեղ «Պարտադիր» են համարվում այն առաջարկները և պայմանները, որոնք չընդունելու դեպքում նա կհրաժարվի Պայմանագիրը ստորագրելուց: «Ցանկալի» են այստեղ համարվում Պայմանագրի պայմանների այն առաջարկները, որոնք նա առաջարկում է Մրցույթի կազմակերպչի քննարկմանը, որոնց մերժումը Մրցույթի կազմակերպչի կողմից, սակայն, չի հանգեցնի մրցույթի Մասնակցի՝ մրցույթի Հաղթող ճանաչվելու դեպում Պայմանագրի ստորագրումից հրաժարման:

5.2.2.5. Պայմանագրի պայմանները որոշվելու են 1.2.5 կետին համապատասխան:

5.2.2.6. Մրցույթի կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում մինչ Պայմանագրի ստորագրումը քննարկել և ընդունել Պայմանագրի առաջարկները և լրացուցիչ (սկզբունքային բնույթ չկրող) փոփոխությունները: Այն դեպքում, եթե կողմերը համաձայնության չգան այդ փոփոխությունների վերաբերյալ, ապա կողմերը պարտավորված կլինեն Պայմանագիրը ստորագրել այն պայմաններով, որոնք շարադրված են սույն Մրցութային փաստաթղթերում և մրցույթի Հաղթողի մրցութային հայտում:

5.2.2.7. Ցանկացած դեպքում Մրցույթի Մասնակիցը պետք է ի նկատի ունենա, որ՝

ա) եթե Պայմանագրային այն պարտադիր առաջարկներից և պայմաններից որևէ մեկը, որը առաջ է քաշվել Մասնակցի կողմից, Մրցույթի կազմակերպչի համար անընդունելի կլինի, այդ մրցութային հայտը կմերժվի անկախ տեխնիկաառևտրային առաջարկների բովանդակությունից:

բ) ամեն դեպքում մրցույթի Մասնակցի կողմից Մրցույթի կազմակերպիչի պատրաստած պայմանագրի սկբնական նախագծի տարածայնությունների արձանագրությունը ներկայացնելը չի զրկում մրցույթի

Մասնակցին և Մրցույթի կազմակերպչին այդ պայմանները քննարկելու և դրանք փոփոխելու իր իրավունքից՝ նախապայմանագրային բանակցությունների ընթացքում՝ այդ պայմանները փոփոխելու համաձայնություն ձեռք բերելու համար::

5.3. Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկը (ձև 3)

5.3.1. Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկի ձևը

ձևի սկիզբ

«----» ----------թվականի

թիվ ----------

Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկ

Մրցույթի Մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

№ п/п	Անվանումը Наименование	Տեղեկություններ մրցույթի Մասնակցի մասին (լրացվում է մրցույթի Մասնակցի կողմից)
1.	Մրցույթի Մասնակցի կազմակերպաիրավական ձևը և ֆիրմային անվանումը Организационно-правовая форма и фирменное наименование Участника конкурса	
2.	Հիմնադիրները (թվարկել բոլոր այն հիմնադիրների անվանումները և կազմակերպաիրավական ձևերը կամ Ա.Ա.Հ., ում բաժինը կանոնադրական կապիտալում գերազանցում է 10%) Учредители (перечислить наименования и организационно-правовую форму или Ф.И.О. всех учредителей, чья доля в уставном капитале превышает 10%)	
3.	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման վկայական (ամսաթիվը և համարը, ում կողմից է տրված) Свидетельство регистрации в государственный регистре юридических лиц (дата и номер, кем выдано)	
4.	Մրցույթի մասնակցի ՀՎՀՀ ИНН Участника конкурса	
5.	Իրավաբանական հասցեն Юридический адрес	
6.	Փոստային հասցեն Почтовый адрес	
7.	Մասնաճյուղեր՝ թվարկել անվանումները և փոստային հասցեները Филиалы: перечислить наименования и почтовые адреса	
8.	Բանկային վավերապայմաններ (բանկի անվանումը և հասցեն, մրցույթի Մասնակցի հաշվարկային հաշվի համարը բանկում, բանկի հեռախոսները, այլ բանկային վավերապայմաններ) Банковские реквизиты (наименование и адрес банка, номер расчетного счета Участника конкурса в банке, телефоны банка, прочие банковские реквизиты)	

9.	Մրցույթի Մասնակցի հեռախոսները (նշելով քաղաքի կոդը) Телефоны Участника конкурса (с указанием кода города)
10.	Մրցույթի Մասնակցի ֆաքսը (նշելով քաղաքի կոդը) Факс Участника конкурса (с указанием кода города)
11.	Մրցույթի Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն Адрес электронной почты Участника конкурса
12.	Մրցույթի մասնակցի ղեկավարի ազգանունը, անունը և հայրանունը, ով ստորագրելու իրավունք ունի՝ համաձայն մրցույթի Մասնակցի հիմնադիր փաստաթղթերի՝ նշելով պաշտոնը և կոնտակտային հեռախոսը Фамилия, Имя и Отчество руководителя Участника конкурса, имеющего право подписи согласно учредительным документам Участника конкурса, с указанием должности и контактного телефона
13.	Մրցույթի Մասնակցի պատասխանատու անձի ազգանունը, անունը և հայրանունը՝ նշելով պաշտոնը և կոնտակտային հեռախոսը Фамилия, Имя и Отчество ответственного лица Участника конкурса с указанием должности и контактного телефона

_____
(Կ.Տ. ստորագրություն)

_____
(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

5.3.2 Լրացման հրահանգներ

5.3.2.1. Մրցույթի Մասնակիցը նշում է մրցութային հայտի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակին համապատասխան (ենթաբաժին 5.1.):

5.3.2.2. Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպաիրավական ձևը) և իր հասցեն:

5.3.2.3. Մրցույթի մասնակիցները պետք է վերոհիշյալ աղյուսակը լրացնեն բոլոր կետերով: Որևէ տվյալի բացակայության դեպքում նշել «չկա» բառը:

5.3.2.4. «Բանկային վավերապայմաններ» 8 սյունյակում նշվում են այն վավերապայմանները, որոնք կօգտագործվեն Պայմանագրի կնքման դեպքում:

5.4.Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք (ձև 4)

5.4.1. Համանման պայմանագրերի կատարման տարեկան ծավալների և ցանկի մասին տեղեկանքի ձև

ձևի սկիզբ

«----» ----------թվականի
թիվ ----------

Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք

Մրցույթի Մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

№ п/п	Կատարման ժամկետները (կատարման սկզբի տարին և ամիսը – կատարման փաստացի կամ նախատեսվող ավարտի տարին և ամիսը, չավարտված պայմանագրերի համար՝ կատարման տոկոսը) Сроки выполнения (год и месяц начала выполнения — год и месяц фактического или планируемого окончания выполнения, для незавершенных договоров — процент выполнения)	Մրցույթի կազմակերպիչ (անվանումը, հասցեն, կոնտակտային անձ՝ պաշտոնի նշումով, կոնտակտային հեռախոսներ) Организатор конкурса (наименование, адрес, контактное лицо с указанием должности, контактные телефоны)	Պայմանագրի նկարագրումը (մատակարարումների կազմը և ծավալը, պայմանագրի հիմնական պայմանների նկարագրումը)Описание договора (объем и состав поставок, описание основных условий договора)	Պայմանագրի գումարը, դրամ, Сумма договора, драм	Տեղեկություն ներթվարկված պայմանագրերի պահանջների մասին Сведения о рекламациях по перечисленным договорам
1.					
2.					
3.					
Ընդամենը ամբողջ 2014 տարվա համար ИТОГО за полный 2014 год					**X**
1.					
2.					
3.					
Ընդամենը ամբողջ 2015 տարվա համար ИТОГО за полный 2015год					**X**
1.					
2.					
3.					
Ընդամենը ամբողջ 2016 տարվա համար ИТОГО за полный 2016 год					**x**

_____
(Կ.Տ. ստորագրություն)

_____
(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

5.5.2. Լրացման հրահանգներ

5.5.2.1.Մրցույթի Մասնակիցը նշում է մրցութային հայտի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակին համապատասխան

5.5.2.2.Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպահիրավական ձևը) և իր հասցեն:

5.5.2.3.Այս ձևում մրցույթի Մասնակիցը նշում է ծավալներով, կատարման ժամկետներով և 2 և 3 բաժինների այլ պահանջներով համադրելի համանման պայմանագրերի կատարման տարեկան ծավալները և ցանկը:

5.5.2.4. մրցույթի Մասնակիցը կարող է ինքնուրույն ընտրել այն պայմանագրերը, որոնք, իր կարծիքով, լավագույն կերպով բնութագրում են իր փորձը:

5.5.2.5.մրցույթի Մասնակիցը կարող է ներառել նաև չավարտված պայմանագրեր՝ տվյալ փաստը անպայմանորեն նշելով:

Հավելված 1 Մրցութային փաթեթի «ՄԷԿ» ՓԲԸ աշխատակիցների առողջության ապահովագրության նկատմամբ ներկայացվող տեխնիկական պահանջները

I. «ՄԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների առողջության ապահովագրություն

1. Ընդհանուր դրույթներ.

Ապահովադիր՝ ____ կետում նշված Պատվիրատու:

Ապահովագրված անձ՝ Ապահովադրի Աշխատակիցները հանդիսացող անձինք, ինչպես նաև վերջիններիս ընտանիքների անդամները: Որպես ընտանիքի անդամ դիտարկվում են Ապահովադրի աշխատողների ամուսինները, ծնողները՝ մինչև 70 տարեկանը ներառյալ և զավակները՝ մինչև 16 տարեկանը ներառյալ:

Ապահովագրող՝ Ապահովագրական ընկերություն, որը բավարարում է ապահովագրական ընկերության նկատմամբ Մրցութային / Գնման փաստաթղթերի ___ կետում նշված պահանջներին, որը միաժամանակ հանդիսանում է սույն Լոտի գծով Մրցույթի Հաղթող (այսուհետ՝ **Ապահովագրող** կամ **Մրցույթի Հաղթող**):

Պայմանագիր՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված կամավոր բժշկական ապահովագրության պայմանագիր:

Ապահովագրության օբյեկտ՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի կամ Ապահովագրված անձի գույքային շահը՝ կապված ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում բժշկական և այլ ծառայությունների ստացման ծախսերի հետ:

Ապահովագրական պատահար է հանդիսանում փաստացի հաստատված Ապահովագրված անձի՝ Պայմանագրի պայմանների համաձայն և դրա գործողության ժամանակահատվածում բժշկական հաստատություն և / կամ Պայմանագրով նախա-տեսված կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ հաստատություն դիմելը՝ առողջական վիճակի վատացման, վնասվածքի, թունավորման և բժշկական օգնության ցուցաբերման կարիք ունեցող այլ իրավիճակների կապակցությամբ:

Առողջության ապահովագրության ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)՝ առողջության կամավոր ապահովագրության ծրագիր, որով սահմանվում են հատուցման ենթակա ծառայությունները:

Ապահովագրավճար՝ ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսված գումարը (վճարը), որը Ապահովադիրը պետք է վճարի Ապահովագրողին Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: Ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները ներկայացվում են 7-րդ կետում:

Ապահովագրական գումար՝ ապահովագրական գումարը ապահովագրական պատահար(ներ)ի առաջացման դեպքում վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորություններ է կրում Ապահովադրի (Ապահովագրված անձի) առջև:

Ապահովագրության տարածք՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքները:

Ապահովագրության ժամկետ՝ Ապահովագրության Պայմանագիրը կնքվում է Մրցույթի Հաղթողի հետ -01.01.2017թ. մինչև 31.12.2017թ. ժամանակահատվածով սույն Գնման փաստաթղթերում նշված պայմաններով՝ կիրառելով Մրցույթի Հաղթողի դիմումի մեջ նշված տարեկան ապահովագրավճարը:

2. Ծրագիր

Ծրագրով նախատեսված բժշկական ծառայությունները և հիվանդությունները հատուցվում են հետևյալ դեպքերում՝

- ✓ Անհետաձգելի բուժում պահանջող հիվանդություններ և վիճակներ, ✓
- ✓ Դժբախտ պատահարների հետևանքներ, ✓
- ✓ Սուր հիվանդություններ և վիճակներ, ✓
- ✓ Քրոնիկ հիվանդությունների սրացումներ, ✓

✓ Վիրաբուժական հիվանդությունների պլանային բուժում: ✓

Ծրագրով նախատեսված ծառայությունների գծով ներկայացված բոլոր սահմանափակումները ենթակա են հատուցման Պայմանագրի ներքո ապահովագրված յուրաքանչյուր անձի ապահովագրության գործողության ընթացքում և նախատեսված են յուրաքանչյուր անձի համար:

2.1. Կանխարգելիչ ընդհանուր բժշկական հետազոտություն*

2.1.1. Թերապևտի խորհրդատվություն,

2.1.2. Տեսողության ստուգում,

2.1.3. Համակարգչային տոմոգրաֆիա,

2.1.4. Որովայնի խոռոչի, փոքր կոնքի օրգանների և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն,

2.1.5. Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ),

2.1.6. Կանանց համար գինեկոլոգի խորհրդատվություն կամ տղամարդկանց համար ուրոլոգի խորհրդատվություն,

2.1.7. Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով,

2.1.8. Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, բժշկի նշանակման դեպքում՝ մամոգրաֆիական հետազոտություն:

* Կանխարգելիչ ընդհանուր բժշկական հետազոտությունն իրականացվում է ապահովագրության գործողության ընթաքում մեկ անգամ Ապահովագրողի կողմից ընտրված բժշկական հիմնարկությունում: Ապահովագրողի կողմից ընտրված բժշկական հաստատությունում Կանխարգելիչ ընդհանուր բժշկական հետազոտություն իրականացնելուց հետո, Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրված անձին տրամադրել տեղեկանք (եզրակացություն) բժշկական հետազոտության անցկացման արդյունքների վերաբերյալ:

2.2. Շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն

2.2.1. Շտապ օգնության խմբի շուրջօրյա այց, այդ թվում՝ մասնագիտացված,

2.2.2. Բժշկի առաջնային զննում, նախնական ախտորոշում,

2.2.3. Անհետաձգելի ախտորոշիչ-բուժական միջոցառումների իրականացում կանչի վայրում,

2.2.4. Անհետաձգելի բուժման դեղորայքային ապահովում,

2.2.5. Հիվանդի տեղափոխում բժշկական հիմնարկություն առանձնակի դեպքերում, երբ անհրաժեշտ է հատուկ կահավորված սանիտարական տրանսպորտ և անհրաժեշտ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի ուղեկցություն:

2.3. Բժիշկ-թերապևտի տնային կանչ

2.3.1. Բժիշկ-թերապևտի տնային կանչ բժշկական հիմնարկություն այցելելու անհնարինության դեպքում՝

2.3.2. Բժշկի առաջնային զննում,

2.3.3. Ախտորոշում,

2.3.4. Բուժման կուրսի նշանակում:

2.4. Ամբուլատոր բուժօգնություն

2.4.1. Խորհրդատվական ընդունելություններ բժիշկ-մասնագետների կողմից, այդ թվում՝ նեղ մասնագետների՝

2.4.2. Թերապևտիկ հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում,

2.4.3. Վիրաբուժական հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում,

2.4.4. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր կամ դրանց համակցում) բուժում ամբուլատոր պայմաններում,

2.4.5. Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում ամբուլատոր պայմաններում,

2.4.6. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում,

2.4.7. Թունավորման թեթև ձևերի ամբուլատոր բուժում (թունավորման դեպքեր, երբ բժշկի կողմից հոսպիտալացում ցուցված չէ),

2.4.8. Լաբորատոր ախտորոշում. Համակլինիկական, բիոքիմիական, մանրէաբանական, շիճուկաբանական, հորմոնալ, ցիտոլոգիական և իմունաբանական հետազոտություններ,

2.4.9. Գործիքային ախտորոշում. Ռենտգենաբանական հետազոտություն, ուլտրաձայնային հետազոտություն, ֆունկցիոնալ, էնդոսկոպիկ զննումներ, համակարգչային տոմոգրաֆիա, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա,

2.4.10. Ամբուլատոր բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ՝ 2 (երկու) անգամ:

2.5. Ստացիոնար բուժօգնություն

2.5.1. Դժբախտ պատահարների հետևանքով հոսպիտալացում,

2.5.2. Թերապևտիկ հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում,

2.5.3. Վիրաբուժական հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում,

2.5.4. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում,

2.5.5. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) բուժում ստացիոնար պայմաններում, բացառությամբ վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ կիրարվող մետաղական կոնստրուկցիաների,

2.5.6. Ներքին և արտաքին արյունահոսությունների բուժում ստացիոնար պայմաններում,

2.5.7. Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում ստացիոնար պայմաններում,

2.5.8. Թունավորումների բուժում ստացիոնար պայմաններում,

2.5.9. Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում,

2.5.10. Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում,

2.5.11. Ստացիոնար բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ՝ 2 (երկու) անգամ,

2.5.12. Սրտանոթային, անոթային և նյարդավիրաբուժական վիրահատություններ,

2.5.13. Չարորակ ուռուցքային հիվանդությունների բուժում՝ վիրահատական և ճառագայթային բուժում կամ քիմիաթերապիա՝ 1 (մեկ) կուրս,

2.5.14. Բժշկական հիմնարկությունում կացության ծախսերի (հիվանդասենյակի արժեքի) հատուցում՝ օրական 20 000 (քսան հազար) ՀՀ դրամի սահմաններում:

2.6. Պլանային վիրաբուժություն

Վիրաբուժական բուժում պահանջող հիվանդությունների պլանային բուժում:

2.7. Դեղորայք

2.7.1. Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքի ձեռքբերման ծախսերի հատուցում,

2.7.2. Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքը անվճար / ուղեգրով ձեռք բերելու հնարավորություն:

2.8. Հղիություն*

2.8.1. Պետական ծրագրից դուրս (հղի կնոջը ոչ տեղամասային պոլիկլինիկային կցելու դեպքում) հղիության հսկողություն,

2.8.2. Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում (այն դեպքում, երբ պաթոլոգիան սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների կամ մինչ ապահովագրությունը առկա քրոնիկ հիվանդությունների արդյունք չէ),

2.8.3. Հղիության ընդհատում բժշկական ցուցումներով:

* ա) Սույն կետով նախատեսված ծառայությունների գծով հատուցման առավելագույն չափը կազմում է 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

բ) Սույն կետը գործում է տվյալ Ապահովագրված անձի մասով ապահովագրության գործողության ուժի մեջ մտնելուց մեկ ամիս հետո:

գ) Բացառություն են կազմում հղիության ընթացքի կամավոր ընդհատման համար կատարված ծախսերը, եթե առկա չեն առողջությանը կամ կյանքին սպառնացող իրավիճակներ:

2.9. Ակնաբուժություն*

2.9.1. Ախտորոշում,

2.9.2. Աչքի բազմատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով,

2.9.3. Տեսողության (դիոպտրիայի) փոփոխության դեպքում օպտիկական ապակիների / լինզաների և շրջանակների ձեռքբերման ծախսերի հատուցում տարեկան մեկ անգամ՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամի սահմաններում յուրաքանչյուր անձի համար:

* Բացառություն են կազմում՝ կոսմետիկ նպատակներով կատարվող վիրահատությունները, տեսողական արատներն ուղղելու նպատակով իրականացվող վիրաբուժությունը:

2.10. Ատամնաբուժություն*

2.10.1. Ախտորոշում և Թերապիա (առավելագույնը 4 (չորս) ատամ)՝ յուրաքանչյուրը 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամի սահմաններում.

- ✓ Ռենտգեն,
- ✓ Կարիեսի և / կամ նրա բարդությունների բուժում,
- ✓ Ուղիների մշակում,
- ✓ Պլոմբավորում լուսակարծրացող պլոմբանյութով:

2.10.2. Վիրաբուժություն.

- ✓ Ատամի պարզ հեռացում,
- ✓ Ատամի բարդ հեռացում,
- ✓ Իմաստության ատամի հեռացում:

2.10.3. Լնդերի բուժում (25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամի սահմաններում)՝

- ✓ Պարոդոնտիտ,
- ✓ Գինգիվիտ:

2.10.4. Պրոֆիլակտիկա (1 (մեկ) անգամ).

- ✓ Ատամնաքարերի մաքրում,
- ✓ Փայլեցում:

* ա) Բացառություն են կազմում այն ատամների մասով կատարված ծախսերը, որոնք մինչապահովագրական բուժզննման արդյունքում կարձանագրվեն որպես՝ պլոմբավորված, կարիեսով և / կամ նրա բարդություններով (պուլպիտ, պերիոդոնտիտ) ախտահարված, օրթոպեդիկ կոնստրուկցիաների տակ գտնվող ատամներ, բացառվում են նաև էսթետիկ բուժման, փորձարարական մեթոդների և կոսմետիկ ատամնաբուժության ծախսերը:

բ) Եթե Ապահովագրված անձը չի բուժվում Ապահովագրողի կողմից նշված ատամնաբուժական կլինիկաներից մեկում, ապա Ապահովագրողի պահանջով պետք է անցնի հետբուժական հետազոտություն վերոնշյալ կլինիկաներից մեկում:

2.11. Այլ ծառայություններ

2.11.1. Պատվաստումներ, որոնք անհրաժեշտ են արտասահման մեկնելու համար,

2.11.2. Բժշկական պարագաներ (ներարկիչ, բամբակ, բինտ, կորսետ, էլաստիկ գուլպաներ և այլն)՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի սահմաններում,

2.11.3. Այլընտրանքային բժշկության մեթոդներ՝ ասեղնաբուժություն, բուժական մերսում՝ 1 (մեկ) կուրս,

2.11.4. Ֆիզիոթերապիա՝ տարեկան 1 (մեկ) կուրս՝ 10 (տասը) սեանս,

2.12. Պայմանագրի կնքումից հետո 1 ամսվա ընթացքում 18 տարեկանից բարձր բոլոր Ապահովագրված անձինք Ապահովագրողի պահանջով պար-տավոր են անցնել նախնական ատամնաբուժական և ակնաբուժական հետազոտություն, որը կազմա-կերպվում է Ապահովագրողի կողմից և իրականացվում է Ապահովագրողի հաշվին:

2.13. Այն դեպքում, երբ Ապահովադիրը չի ապահովագրում բոլոր աշխատողների ընտանիքների անդամներին նույն պայմանագրով, վերջիններս միևնույն պայմաններով կարող են ապահովագրվել Պայմանագրի կնքումից հետո 1 ամսվա ընթացքում, իսկ 1 ամիս հետո ապահովագրվելու դեպքում պետք է անցնեն նախնական ընդհանուր բուժզննում իրենց հաշվին, ընդ որում բուժզննման անցկացման վայրը նշանակում է Ապահովագրողը:

2.14. Նշանակված դեղորայքը կամ ախտորոշիչ հետազոտությունները հատուցվում են միայն այն հիվանդությունների կապակցությամբ, որոնք ներառված են ծրագրում:

2.15. Եթե բուժումն իրականացվում է արտասահմանից հրավիրված բժշկի կողմից, ապահովագրական հատուցումն իրականացվում է տվյալ բուժհաստատությունում տվյալ հիվանդության բուժման համար գործող գնի սահմաններում:

2.16. Ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ տարածքում գործող լիցենզավորված ցանկացած բուժհաստատությունում:

3. Բացառություններ Ծրագրից

3.1. Մինչև առաջին անգամ Ապահովադրի հետ կնքած ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելն առաջացած հիվանդությունները կամ առողջական վիճակները:

3.2. Ապահովագրական պատահարները, որոնց տեղի ունենալու մասին Ապահովագրված անձը (նրա օրինական ներկայացուցիչը) չի հայտնել Ապահովագրողին 24 ժամվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատահարի մասին հայտնելն անհնար է եղել: Վերջին դեպքում Ապահովագրված անձը պետք է դա իրականացնի առաջին իսկ հնարավորության դեպքում:

3.3. Դեպքերը և առողջական վիճակներ, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են ներկայացվել հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

3.4. Վնասվածքներ, որոնք Ապահովագրված անձին հասցվել են ալկոհոլի, թմրանյութի և տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ալկոհոլային և թմրադեղային թունավորումների բուժում:

3.5. Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառում: Ինքնասպանության փորձ:

3.6. Հատուկ վնասակար վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բծավոր տիֆ),

3.7. ՄԻԱՎ, ՁԻԱՀ, վեներական հիվանդություններ, այդ թվում նշված հիվանդությունների բացահայտմանն ուղղված հետազոտությունները,

3.8. Հոգեկան հիվանդություններ, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա և դրանց հետևանքները,

3.9. Ճառագայթային հիվանդություն և դրա բարդությունները,

3.10. Թոքախտ,

3.11. Քրոնիկ հեպատիտ B, C, D և E, այդ թվում դրանց բացահայտմանն ուղղված հետազոտությունները, լյարդի ցիռոզ, հեմոդիալիզ պահանջող երիկամների անբավարարություն,

3.12. Շաքարախտ և դրա բարդությունները, այդ թվում դրա բացահայտման համար նախատեսված հետազոտությունները,

3.13. Բնածին անոմալիաներ և զարգացման արատներ, ժառանգական և գենետիկ հիվանդություններ (բուժում և հետազոտություններ),

3.14. Անպտղություն, սեռական ֆունկցիայի խանգարում և էրեկտիլ դիսֆունկցիա (իմպոտենցիա), այդ թվում նշված հիվանդությունների բացահայտմանն ուղղված հետազոտությունները,

3.15. Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ,

3.16. Առանց բժշկական ցուցման իրականացված ցանկացած բժշկական ծախս,

3.17. Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն,

3.18. Տնային պայմաններում բուժխնամք,

3.1.9. Քրոնիկ հիվանդությունների պլանային և պահպանողական թերապևտիկ բուժում (այն է՝ քրոնիկ հիվանդությունների թերապևտիկ բուժում՝ ոչ սրացման շրջանում),

3.20. Քրոնիկ հիվանդությունների դինամիկայի հսկողության համար նախատեսված հետազոտություններ,

3.21. Բացիլակրության, դիսբակտերիոզի և պարազիտակրության համար նախատեսված հետազոտությունները և բուժումը,

3.22. Փորձարարական և այլընտրանքային բժշկության մեթոդներ. իրիդոդիագնոստիկա, աուրիկուլոդիագնոստիկա, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, էներգոինֆորմատիկա, ցուբոթերապիա, հիրուդոթերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, Ախտորոշում Ֆոլլի մեթոդով և այլն:

3.23. Կենսաբանական ակտիվ հավելումներ:

3.24. Այն ծառայությունները, որոնք մատուցվում են կանխարգելիչ, կոսմետիկ (ինչպես նաև ատամնաբուժության դեպքում) և առողջարանային նպատակներով (այդ թվում օստեոխոնդրոզի բուժում ոչ սրացման ժամանակ), կանխարգելիչ մերսում, տրենաժորներ, ջրային պրոցեդուրաներ, աղիքների մոնիթորինգային մաքրում, սաունա, սոլյարի և այլն:

3.25. Պլանային անգիոգրաֆիկ հետազոտություններ, էքստրակորպորալ բուժման մեթոդներ: Լազերային թերապիա, օզոնաթերապիա, պլազմաֆերեզ, հեմոսորբիա, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆակապսուլա՝

3.26. Էնդոպրոթեզավորում,

3.27. Վերականգնողական բուժում,

3.28. Օրգանների փոխպատվաստում:

3.29. Հարմարանքներ (լսողական սարքեր, պրոթեզներ, ինպլանտներ, հաշմանդամային սայլակներ, օրթոպեդիկ հարմարանքներ և այլն):

3.30. Պլաստիկ և կոսմետիկ վիրաբուժություն և դրա բարդացումները, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը դժբախտ պատահարի հետևանք է հանդիսանում:

3.31. Առուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, խորը միկոզներ, սեբորեա, ակնե (կորյակացան):

3.32. Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Նևրոզներ և սահմանային վիճակներ:

3.33. Քաշի և խոսքի շտկում, տեսողության շտկում լազերային վիրաբուժության մեթոդների օգնությամբ, սեռի վիրաբուժական փոփոխում:

3.34. Հակաբեղմնավորում, արհեստական բեղմնավորում:

3.35. Միզասեռական վարակներ, այդ թվում առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (յուրաքանչյուր վարակի հայտնաբերման համար հետազոտություններ և բուժում), սեռական օրգանների սնկային հիվանդություններ:

3.36. Պոլիպների, գորտնուկների և այլնի հեռացում կոսմետիկ նպատակներով:

3.37. Ատամնաբուժության մեջ ցանկացած տեսակի պրոթեզավորում, պրոթեզավորման նախապատրաստում, թերմոֆիլների, անկերային բույթերի օգտագործում, օրթոդոնտիա, օրթոպեդիա:

3.38. Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում:

4. Ապահովագրական գումարը.

Ապահովագրական գումարը սահմանավում է յուրաքանչյուր Ապահովագրված անձի գծով:

5. Ապահովագրական հատուցման ծավալը.

5.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է հատուցել Ապահովագրված անձի կողմից կրած վնասները պայմանագրով սահմանված հատուցման սահմանաչափերի սահմաններում:

6. Ապահովագրական հատուցման սահմանաչափերը.

6.1. Յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար բոլոր ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցման առավելագույն սահմանաչափը սահմանվում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ, ընդ որում սահմանվում են ենթասահմանաչափեր՝ ամբուլատոր բուժօգնության գծով՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ստացիոնար բուժօգնության գծով՝ 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

6.2. 6.1. կետում նշված սահմանաչափը ենթակա է նվազեցման յուրաքանչյուր հատուցման գումարի չափով:

7. Չհատուցվող գումարը.

Ոչ պայմանական չհատուցվող գումար չի սահմանվում:

8. Ապահովագրության պայմանագրի դիմաց վճարումը և ապահովագրավճարը.

Ապահովագրավճարը տարաժամկետ վճարվում է Ապահովագրողի հաշվարկային հաշվին 6 (վեց) մասով.

- ապահովագրավճարի առաջին մասի վճարումը _____ (_____) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.01.2017թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի երկրորդ մասի վճարումը _____ (_____) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.03.2017թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի երրորդ մասի վճարումը _____ (_____) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.05.2017թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի չ

որորդ մասի վճարումը _____ (_____) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.07.2017թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի հինգերորդ մասի վճարումը _____ (_____) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.09.2017թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի վեցերորդ մասի վճարումը _____ (_____) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.11.2017թ. ոչ ուշ,

Վերը նշված կարգի հետ համեմատած Մրցույթի Մասնակիցները Մրցութային հայտերում կարող են առաջարկել ապահովագրավճարի վճարման կարգի ավելի բարենպաստ պայմաններ:

Կնքված ապահովագրության պայմանագրով Ապահովագրողի պատասխանատվությունը պետք է սկսվի ապահովագրության պայմանագրի կնքման պահից՝ ապահովագրավճարի առաջին մասի վճարման ամսաթվից անկախ:

9. Ապահովագրության պայմանագրի այլ պայմանները.

9.1. Պատահարի կարգավորման շրջանակներում Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրամադրվող փաստաթղթերը.

ա) Պատահարը ապահովագրական ճանաչելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

- **Հայտային դիմում**, որը լրացվում է հայտատուի կամ նրա օրինական ներկայացուցչի (եթե Ապահովագրված անձն անչափահաս է), ամուսնու / կնոջ կողմից:

- Բժշկական փաստաթղթեր

կատոր-պոլիկլինիկական ծառայության դեպքում՝

- Բժշկական տեղեկանք*, որտեղ պետք է նշված լինի՝
  - ✓ Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
  - ✓ Ապահովագրված անձի՝ դիմելու ամսաթիվը,
  - ✓ կատարված և / կամ նշանակված լաբորատոր և / կամ գործիքային հետազոտությունները,
  - ✓ վերջնական ախտորոշումը,
  - ✓ նշանակված բուժումը (դեղերի ցանկը ներառյալ՝ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը):

կանքը պետք է լրացված լինի բժշկի կամ բուժհաստատության բլանկի վրա և ստորագրված լինի բուժող բժշկի կողմից:

- Կատարված լաբորատոր և / կամ գործիքային հետազոտությունների պատասխաններ:

Ստացիոնար բուժման դեպքում

- Էպիկրիզ* (քաղվածք հիվանդության պատմությունից), որտեղ պետք է նշված լինի՝
  - ✓ Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
  - ✓ Ապահովագրված անձի՝ դիմելու և դուրսգրման ամսաթիվը,
  - ✓ կատարված լաբորատոր և / կամ գործիքային հետազոտությունները,
  - ✓ վերջնական ախտորոշումը,
  - ✓ նշանակված բուժումը (դեղերի ցանկը ներառյալ՝ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը):

*Էպիկրիզը պետք է ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և կնքված լինի բժշկական հաստատության կնիքով:

- Կատարված լաբորատոր և / կամ գործիքային հետազոտությունների պատասխաններ:

- Ֆինանսական փաստաթղթեր

Եվ՛ ամբուլատոր-պոլիկլինիկական, և՛ ստացիոնար բուժման դեպքում՝

- Դեղերի գնման դեպքում ՀԴՄ կտրոն և բացվածք (տրամադրված դեղորայքի անվանացանկ),
- ՀԴՄ կտրոն, ԴՄՕԱ կամ հաշիվ-ապրանքագիր (վերջիններում պետք է նշված լինի մատուցված բժշկական ծառայության տեսակը, սակագինը, վճարված գումարի չափը, վճարման ամսաթիվը, հաստատված լինի բուժհաստատության կնիքով):

- Հատուցում ստանալու համար ներկայացվող փաստաթղթեր

- Անձնագիր կամ նույնականացման քարտ (վերջիններս ներկայացնում են այն դեպքում, եթե Ապահովագրված անձը հատուցումը ստանալու է ընկերության գրասենյակից կանխիկ եղանակով),

- ծննդյան վկայականի պատճենը (եթե ապահովագրված անձն անչափահաս է, փաստաթղթերը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը՝ հայրը / մայրը):

բ) Փաստաթղթերի ներկայացման կարգը.

Փաստաթղթերը, այդ թվում հայտային դիմումը, կարելի է ներկայացնել Ապահովագրական ընկերություն ցանկացած աշխատանքային օր հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- ✓ Առձեռն,
- ✓ * Էլ. փոստով,
- ✓ * Ֆաքսով:

* Ապահովագրական հատուցումը տրամադրվում է բոլոր վճարային փաստաթղթերի բնօրինակները Ապահովագրողին ներկայացնելուց հետո: Էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով ուղարկված բոլոր փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն Ապահովագրական ընկերության գրասենյակ հայտը ներկայացնելու օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում:

Ապահովադրի / Ապահովագրված անձի կողմից ապահովագրական պատահարը և բժշկական ծախսերը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն Ապահովագրողին բժշկական ծախսերը կատարելուց հետո առավելագույնը 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում:

գ) Հատուցման ընթացակարգ

Ապահովագրված անձի կողմից ինքնուրույն բժշկական ծախս կատարելու դեպքում ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- ✓ Կանխիկ,
- ✓ Անկանխիկ:

9.2. Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություններ տեղի ունենալու դեպքում կողմերի գործողությունների կարգը.

Ապահովագրության պայմանագիրը պետք է նախատեսի ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի և Ապահովադրի գործողությունների հետևյալ կարգը.

- Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, զանգահարի Պայմանագրում վրա նշված հեռախոսահամարով և գրանցի հայտը:

Հայտը գրանցելուց հետո.

- Ապահովագրված անձը կարող է սպասարկվել Ապահովագրողի հետ համագործակցող բժշկական հիմնարկությունների ցանկում ընդգրկված հիմնարկությունում, որտեղ սպասարկումը կիրականացվի անվճար (եթե դեպքը Ապահովագրողի կողմից հաստատվել է որպես ապահովագրական):
- Ապահովագրված անձը կարող է սպասարկվել Ապահովագրողի հետ համագործակցող բժշկական հիմնարկությունների ցանկում չընդգրկված հիմնարկությունում, որի դեպքում հարկ կլինի վճարումներն իրականացնել ինքնուրույն և այնուհետև Ապահովագրական ընկերություն ներկայացնել բուժօգնությունը հիմնավորող վճարային և բժշկական փաստաթղթերը:
- Հայտի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացվում է որոշում պատահարը ապահովագրական ճանաչելու և հուտուցումը մասամբ / ամբողջությամբ իրականացնելու կամ մերժելու վերաբերյալ:

Հատուցման վճարումն իրականացվում է հայտի կարգավորման մասին որոշման ընդունման պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

9.3 Ապահովագրության Պայմանագրի վաղաժամկետ խզումը.

Ապահովադրի կողմից Ապահովագրության Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադրին Պայմանագրի չլրացած օրերի համար վճարված ապահովագրավճարը, որը նվազեց-վում է ընդհանուր ապահովագրավճարի 20%-ի չափով և հատուցումների գումարներով՝ համաձայն սույն կետում նշված բանաձևի: Վերոհիշյալ պայմանները կիրառվում են նաև Պայմանագրի մասնակի դադարեցման դեպքում (որևէ Ապահովագրված անձի մասով ապահովագրությունը դադարեցնելու դեպքում)՝

$$RP = \frac{P}{IP} * IRP - P * 20\% - PC$$

RP՝ վերադարձվող գումար, P՝ ընդհանուր ապահովագրավճար, IP՝ Պայմանագրով նախատեսված ապահովագրության ժամկետ, PC՝ հատուցումների գումարներ, IRP- Պայմանագրի չլրացած օրեր:

Ապահովագրողի կողմից վերադարձվող ապահովագրավճարի գումարը կարող է չնվազեցվել ընդհանուր ապահովագրավճարի 20%-ի չափով, եթե Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագրի դադարեցումը պայմանավորված է.

- Ապահովագրված անձի մեկ այլ Ապահովագրված անձով և միևնույն ապահովագրության տեսակով փոխարինման անհրաժեշտությամբ, կամ,
- Պայմանագրի որևիցե Ապահովագրված անձի մասով Պայմանագրի դադարեցման պահանջով, սակայն դադարեցման պահին Ապահովադիրը ունի Ապահովագրողի հետ գործող նմանատիպ (դադարեցման ենթակա Պայմանագրի հետ միևնույն ապահովագրատեսակով) 15 (տասնվհինգ) և ավելին գործող ապահովագրության Պայմանագրեր և/կամ Ապահովագրված անձ:

10. Հատուկ դրույթներ

Սույն փաստաթուղթը կազմված է երկու հավասարազոր իրաբանական ուժ ունեցող օրինակից (հայերեն և ռուսերեն): Սույն փաստաթղթում հայերեն և ռուսերեն տեքստերում հակասություններ առաջանալու դեպքում գերակայում է հայերեն տարբերակը: